Արձանագրություն հ.3

ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի գիտական խորհրդի
18.05.23 թ. կայացած նիստի

Նիստին ներկա էին գիտական խորհրդի 38 անդամներից 27-ը:
Նիստը նախագահում էր փոխդեկան, ԵՊՀ գիտական խորհրդի ֆակուլտետից ընտրված անդամ, տ.գ.թ. Գ.Ա.Բարխուդարյանը:

Օրակարգում՝

1. <<ԵՊՀ պրոֆեսոր-էմերիտուս>> պատվավոր կոչում շնորհելու մասին:
2. Դոցենտի կոչման երաշխավորություն:
3. Ընթացիկ հարցեր:

Օրակարգի առաջին հարցի վերաբերյալ կանոնակարգի դրույթներին ծանոթացրեց նախագահող Գ.Բարխուդարյանը:

Արտահայտվեցին՝ պրոֆեսոր Գ.Գալստյանը, դոցենտներ Ա.Ներսիսյանը և Կ.Խաչատրյանը, ովքեր ներկայացրեցին Հայկ Լևոնի Սարգսյանի գործունեության անցած ուղին:

1970թ. ավարտել է Մոսկվայի Մ. Լոմոնոսովի անվ. պետական համալսարանի տնտեսագիտության ֆակուլտետը, իսկ 1974թ.՝ նույն համալսարանի ասպիրանտուրան: 1974թ. նոյեմբերի 1-ից աշխատել է ԵՊՀ տնտեսագիտության ֆակուլտետի «Մաթեմատիկական մեթոդների կիրառությունները էկոնոմիկայում» ամբիոնում՝ որպես դասախոս: Հետագայում աշխատել է Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտում, Հայաստանի գիտությունների ակադեմիայի տնտեսագիտության ինստիտուտում, ՀԿԿ Կենտկոմում, ՀՀ Էկոնոմիկայի պետական կոմիտեում: Այդ տարիներին համատեղությամբ աշխատել է նաև ԵՊՀ տնտեսագիտական կիբեռնետիկայի՝ հետագայում տնտեսագիտության ֆակուլտետում:

1994 թվականից աշխատում է ԵՊՀ-ում: 1996-2000թթ. եղել է «Կառավարման և գործարարության» ամբիոնի հիմնադիր վարիչը: 2000թ.-ից մինչ այժմ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի դեկանն է:

ՈՐՈՇԵՑԻՆ - Հիմք ընդունելով «Երևանի պետական համալսարանի պատվավոր կոչումների և պարգևների շնորհման» կարգի 3.9-րդ կետի պահանջը, առաջարկել ԵՊՀ գիտական խորհրդին՝

երկարատև աշխատանքի և ԵՊՀ զարգացման գործում նշանակալի ներդրման համար ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի դեկան, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Հայկ Լևոնի Սարգսյանին շնորհել **«ԵՊՀ պրոֆեսոր - էմերիտուս»** պատվավոր կոչումը:

Որոշումն ընդունվեց բաց քվեարկությամբ՝ 26 կողմ և 1 ձեռնպահ արդյունքով:

Օրակարգի 2-րդ հարցի վերաբերյալ զեկուցեց ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի նախագահ պրոֆ. Հ.Մնացականյանը, նա ներկայացրեց դոցենտի կոչում ստանալու համար դիմած Վարդուհի Գևորգի Գաբրիելյանի կողմից ներկայացված փաստաթղթերը, որոնք համապատասխանում են դոցենտի կոչում հավակնելու համար ներկայացվող պահանջներին և առաջարկեց նրան թույլ տալ մասնակցելու գիտխորհրդի փակ, գաղտնի քվեարկությանը:

Ընտրվեց հաշվիչ հանձնաժողով հետևյալ կազմով՝ Հակոբջանյան Աննա Հովիկի /նախագահ/, Հայրապետյան Գրիգոր Ռաֆայելի և Պետրոսյան Սարգիս Արամի:

Լսեցին հաշվիչ հանձնաժողովի նախագահ Ա.Հակոբջանյանի հաղորդումը քվեարկության արդյունքների մասին: Քվեարկությանը մասնակցել են գիտխորհրդի 38 անդամներից նիստին ներկա գտնվող 27-ը, քվեատուփում առկա է եղել 27 քվեաթերթ:

Վ.Գաբրիելյանի օգտին քվեարկել են 27-ը, դեմ չկա, անվավեր քվեաթերթեր չկան::

Որոշեցին Վ.Գաբրիելյանին երաշխավորել ստանալու ՀՀ ԲՈԿ –ի կողմից շնորհվող դոցենտի գիտական կոչում;

Ընթացիկ հարցեր չկան

Գիտխորհրդի նիստի
նախագահող, տ.գ.թ. Գ.Ա.Բարխուդարյան

Գիտխորհրդի քարտուղար
տ.գ.թ., պրոֆեսոր Ա.Հ.Համբարձումյան